

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավարի 2013թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

13.07.2013

Հարգելի համայնքի բնակիչներ և հյուրեր.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, ձեր ուշադրությանն եմ ցանկանում ներկայացնել հաշվետու կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքներն ըստ առանձին բնագավառների:

Համայնքն ունի 300.0 հա հողատարածք, որից 220.9 հա գյուղատնտեսական նշանակության են: Բնակչության թիվը համայնքում կազմում է 1222 մարդ, տնտեսությունների քանակը՝ 216: Հաշվետու կիսամյակում ծնվել են 6 երեխաներ:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս գյուղապետարանը կազմակերպել է և Ազգային վիճակագրական ծառայության Վաղարշապատի տարածքային բաժին է ներկայացրել աշխատակազմի միջոցով իրականացված անասնազխանակի հաշվառումը, ցանքատարածությունների հունիսյան հաշվառումը, յուրաքանչյուր ամսվա ստացած բերքի հաշվառման ցուցանիշները, զարնանացան ցանքատարածությունների բերքատվության ամսական արդյունքները:

1. Սոցիալ-տնտեսական բնագավառ

Ի նպաստ համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման՝ 2013 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են որոշակի աշխատանքներ: Հնարավորության սահմաններում կազմակերպվել են համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական օգնություն ցուցաբերելու աշխատանքներ, որի համար համայնքի բյուջեից հատկացվել է 620.0 հազար ՀՀ դրամ: Այս կիսամյակի ընթացքում Շահումյանի թ/Ֆ համայնքի 35 անապահով ընտանիքների տրվել է դրամական օգնություն, որը ծառայել է ֆինանսապես անապահով ընտանիքներին հողի հարկի ապառքների մուծման, ինչպես նաև այլ կարևոր հիմնախնդիրների լուծման համար:

Ֆինանսական օգնությունը տրվելիս հաշվի են առնվել համայնքի բնակիչների սոցիալական վիճակը, ավագանուն ուղղված նրանց դիմումները: Բոլոր դիմումները քննարկվել են համայնքի ավագնու կողմից անցկացված նիստերում:

Համայնքի բյուջեից 100.0 հազար ՀՀ դրամ գումար է տրամադրվել նաև Արմավիրի մարզում կարկուտից տուժած գյուղական համայնքներին ֆինանսական օգնություն է ցուցաբերելու համար:

Գյուղում եժ ուշադրություն է հատկացվում երիտասարդներին, նրանց համար հետաքրքիր միջոցառումների կազմակերպմանը: 2013 թվականի փետրվար ամսին համայնքում կազմակերպվեց Տեառնդառաջին նվիրված միջոցառում, որի ժամանակ 5 նորապսակ զույգերի բաժանվեցին նվերներ:

« Վերջին զանգի » միջոցառման առթիվ Շահումյանի միջնակարգ դպրոցին համայնքի բյուջեից հատկացվել է 150.0 հազար ՀՀ դրամ, որից 110.0 հազար դրամն ուղղվել է միջոցառման համար նախատեսված ծախսերին, իսկ 40.0 հազար ՀՀ դրամը դրամական պարզևատրման տեսքով տրվել է ավարտական դասարանին:

2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքում պարբերաբար իրականացվել են աղբահանության աշխատանքներ, որի համար հատկացվել է 360.0 հազար ՀՀ դրամ:

Սիստեմատիկ իրականացվել է փողոցների լուսավորության աշխատանքը:

Հաշվետու կիսամյակի ընթացքում մասամբ վերանորոգվել են նաև համայնքի ճանապարհները: Փողոցների քանդված փոսերը լցվել են խճաքարերով:

4. Պաշտպանության բնագավառ

Աջակցել ենք նաև էջմիածնի զինվորական կոմիսարիատի գործունեությանը՝ տրամադրելով հնարավոր բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը համայնքում զորակոչին ենթակա անձանց վերաբերյալ:

5. Ֆինանսների բնագավառ

Հաշվետու կիսամյակի ընթացքում օրենքով սահմանված կարգով Շահումյանի թ/ֆ համայնքի գյուղապետարանի աշխատակիցների կողմից կազմակերպվել են նաև հողի հարկի, գույքահարկի հավաքագրման և վերահսկման աշխատանքներ: Հողի հարկը կիսամյակային պլանի համաձայն գանձվել է 103.1%, գույքահարկը՝ շենքերի- շինություններինը՝ 17%, փոխադրամիջոցներինը՝ 70%:

Համայնքի բյուջեի եկամուտներից սեփական եկամուտների կատարողականը կազմում է 78.0 %:

Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավարությունը բնակիչների հետ մշտապես գտնվում է անմիջական շփման մեջ՝ ուշադրություն դարձնելով վերջիններիս բազմաթիվ խնդիրների լուծման համար դրված ցանկացած առաջարկություն: Բնակիչներից յուրաքանչյուր ոք, դիմելով գյուղապետարան, բոլոր հարցերի համար ստացել է սպառիչ պատասխաններ: Գյուղապետարանը հնարավորությունների սահմանում աջակցել է բնակչությանը այլ հիմնարկ-ծեռնարկությունների հետ ունեցած խնդիրների համահարթեցմանը՝ ցուցաբերելով խորհրդատվական օգնություն: Շուրջ 160 բնակիչներ հաշվետու կիսամյակի ընթացքում ստացել են բազմաթիվ բովանդակությամբ տեղեկանքներ::

2013 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Շահումյանի թ/ֆ գյուղապետարան տարբեր հիմնարկություններից մուտքագրվել են շուրջ 60 պաշտոնական բազմաթիվ գրություններ, որոնք պատասխանվել են ըստ անհրաժեշտության:

Նաև ի կատարումն համայնքների ավագանիներին 2009 թվականին ուղղված մեթոդական նամակի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ենք ուղարկել համայնքի բյուջեի փոփոխությունները, համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատող որոշումների փաթեթները:

Ցանկացած նորամուծություն օրենքի բնագավառում, որը վերաբերում է համայնքի բնակիչների առջև դրված հիմնախնդիրների լուծմանը, հողի հարկի և գույքահարկի, պետական տուրքերի մուծմանը, ինչպես նաև այլ կարևոր հարցերի, բնակիչներին տեղեկացրել են Շահումյանի թ/ֆ համայնքի գյուղապետարանի աշխատակիցները:

Հաշվի առնելով այս ամենը՝ համայնքի ղեկավարությունն արածը չի համարում բարձր ցուցանիշ և դրանով չի բավարարվելու: Համայնքի զարգացմանն ուղղված աշխատանքները միշտ ընթացքի մեջ են և շարունակական:

ԳՅՈՒՂԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Համայնքի համար առաջնահերթ լուծման խնդիր է հանդիսանում գազաֆիկացման հարցը: Համայնքի մոտ 30 տնտեսություն գազաֆիկացվել է Շահումյան գյուղի գազի բաժանարար կետից: Որպեսզի Շահումյանի թ/ֆ համայնքը գազաֆիկացվի, առաջին հերթին համայնքին անհրաժեշտ է գազի նոր բաժանարար կետ, որը կապահովի համայնքի մնացած բնակիչների տները

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքի ընդհանուր ժողովի
Արձանագրությունից

13 . 07. 2013 թ.

գ. Շահումյանի թ/Ֆ

Տեղի ունեցավ Շահումյանի թ/Ֆ համայնքի անդամների ընդհանուր ժողովը: Ժողովին մասնակցում էին համայնքի 15 անդամներ՝ ավագանիներ, բուժամբուլատորիայի աշխատակիցներ, մանկավարժներ, գյուղապետարանի աշխատակիցներ և գյուղի բնակիչներ:

Ժողովին մասնակցում էր մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ Սանասար Բաղդասարյանը:

Ժողովի նախագահ ընտրվեց Ա. Յայլոյանը՝ քարտուղարությամբ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Լ. Ղասաբյանի:

Օրակարգում.-

1. Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավարի 2013 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների մասին

Ձեկուցող՝ համայնքի ղեկավար՝ Ա.Յայլոյան

2. Ընթացիկ հարցեր

Ելույթ ունեցան 4 հոգի:

Ձեկուցման մեջ ելույթ ունեցողները մասնակցեցին համայնքին հուզող հետևյալ հիմնախնդիրների քննարկմանը.

1. Գյուղը չունի մանկապարտեզ:
2. Չունի մշակույթի տուն:
3. Բնակչությունը չունի աշխատանք և եկամտուտի աղբյուրներ՝ հողերը 5-րդ կարգի են և անեկամտաբեր:

4. Գյուղի մեծամասնությունը գազաֆիկացված չի:
5. Երկու բնակելի եռահարկ շենքերի տանիքները վերանորոգման կարիք ունեն:
6. Գյուղամիջյան ճանապարհները քայքայված են և բարեկարգման կարիք ունեն:

Իսկականի հետ ձիջտ է:

Շահունյանի թ/ֆ համայնքի ղեկավարի
Աշխատակազմի քարտուղար՝



A handwritten signature in blue ink, appearing to read 'L. Nisapyan'.

Լ. Ղասարյան